Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

« 15 » **հունվարի 2024թ.**

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության (Այսուհետև՝ ՔԿ ծառայություն) կարիքների համար 2024թ.-ի ընթացքում համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդի ձևով՝ 27.12.2023թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգ: Նշված գնման ընթացակարգին մասնակցել են թվով տասներեք մասնակիցներ, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր 08.01.2024թ.-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը կայացել է 09.01.2024թ.-ին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում՝ N 6 չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությունում բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը և հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումն, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտի ապրանքային նշան և տեխնիկական բնութագիր սյունակներում ինֆորմացիայի փոխարեն դրված էին գծիկներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունը: Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանության շտկման վերաբերյալ, սահմանված ժամկետում շտկումները չի կատարել, Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել այն:

Արդյունքում՝ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետով՝ «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ գնման ընթացակարգը իրականացվել է առանց հայտի ապահովման, ուստի հայտի ապահովման գումար չի կարող գանձվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				Գնման ընթացակարգի ծածկագիրը
անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	
«ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆ ԻԿՍ» ՍՊԸ	00521878	Ք. Երևան, Ֆրունզե 13	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ կետի ա/ ենթակետ. **Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20»

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԿԱՄՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**